**ԳԱԳԻԿ ԴԱՆԻԵԼՅԱՆ**

# ԱԼ-ՄԱԿՐԻԶԻԻ ՊԱՏՄԱԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

Թակի ալ-Դին Ահմադ իբն Ալի ալ-Մակրիզին (մահ. 1442թ.) արաբական պատմագրության մամլուքյան շրջանի խոշորագույն ներկայացուցիչներից մեկն է: Շուրջ երկու դար է, ինչ արեւմտյան արաբագիտական դպրոցները ծանոթ են ալ-Մակրիզիին եւ նրա հեղինակած երկերի մեծ մասին: Այս ընթացքում նա «հասցրել» է ձեռք բերել *«մամլուքյան պատմիչներից ամենաերեւելիի»*[1] եւ *«իսլամական քաղաքակրթության կարեւորագույն պատմագիրներից մեկի»*[2] համբավ: Հեղինակի գիտական ժառանգությունը նույնպիսի բարձր գնահատականի է արժանացել նաեւ արաբական աշխարհի ուսումնասիրողների կողմից: Մուստաֆա Զիյադան, օրինակ, կարծիք է հայտնել, թե *«տարակույս չկա, որ ալ-Մակրիզին առաջնային տեղ է գրաղեցնում հիջրայի 9-րդ դարի առաջին կեսի եգիպտացի պատմիչների շարքում, եւ սրա համար բավարար ապացույց է թեկուզ այն, որ այդ սերնդի մյուս բոլոր հայտնի եգիպտացի պատմիչները նրա աշակերտներն են եղել»*[3]: Ռ. Ամիտայը սրա ամենահավանական պատճառ է նշում այն, որ հեղինակի կարեւորագույն երկը՝ *Kitāb al-sulūk*-ը, մամլուքների պատմությանը վերաբերող եվրոպական լեզվով թարգմանված առաջին սկզբնաղբյուրն է եղել, ինչը կանխորոշել է երկի հաջողությունը գիտական շրջանակներում[4]: Վերջին տարիներին, սակայն, նորանոր մամլուքյան

1 **Hitti Ph.**, *History of the Arabs, Macmillan and Co., London, 1946, p. 688:* Հմմտ. **Little D.**, *A Comparison of al-Maqrīzī and al-ʿAynī as historians of contemporary events // Mamluk Studies Review* (հետայսուն՝ *MSR), vol. VII/2, 2003, p. 205.*

2 **Bauden F.**, *al-Maqrīzī // Encyclopedia of the Medieval Chronicle, ed. by R. G. Dunphy, E. J. Brill, Leiden-Boston, 2010, pp. 1074.*

3 ***Al-Maqrīzī,*** *Kitāb al-sulūk li maʿrifat duwal al-mulūk, ǧ. 1.1, bitaḥqīq Muḥammad Muṣṭafā Ziyāda, Maṭbaʿat al-taʾlīf wa al-tarǧama wa al-našr, al-Qāhira, ṣ. "Wāw":* Հմմտ. **Little D.**, *Historiography of the Ayyūbid and Mamlūk epochs // The Cambridge History of Egypt. Vol. 1: Islamic Egypt 640-1517, ed. by C. F. Petry, Cambridge Univesity Press, Cambridge, 1998, p. 436.*

4 Նա նկատի ունի *Kitāb al-sulūk*-ի մամլուքների վաղ պատմությունն ընդգրկող հատվածի *(1250-1310թթ.)* Մ. Քատրմերի նախաձեռնած ֆրանսերեն թարգմանությունը: Տե՛ս *Histoire des Sultans Mamlouks, de l'Egypte écrite en Arabe par Taki-Eddin-Ahmed-Makrizi, traduite en Français par* **M. Quatremère,** *2 t., Paris, 1837, 1845:* Հետագայում Բլոշեն նախաձեռնել է երկի՝ Այյուբյանների պատմությունն ընդգրկող հատվածի թարգմանություն: Տե՛ս *Blochet E., Histoire d'Egype de Makrizi (traduction française accompagnée de notes historiques et géographiques) // Revue de l'Orient Latin, t. VI (1898), p. 435-489, t. VIII (1900-1901), p. 165-212, t. IX (1902), p. 6-163, 466-530, t. X (1903-1904), p. 248-371, t. XI (1905-1908),*

սկզբնաղբյուրների հայտնաբերմանը զուգահեռ, մի շարք արդի հետազոտողների մոտ միտում է նկատվում վերանայելու այս հեղինակի պատմագրական ժառանգությանը նախորդ սերնդի ուսումնասիրողների տված գնահատականը: Հատկանշական է, որ ալ-Մակրիզին, ինչպես ներքեւում ենք տեսնելու, նման հակասական վերաբերմունքի է արժանացել նաեւ իր ժամանակակիցների կողմից:

Ալ-Մակրիզին[5] ծնվել է 1364թ. Կահիրեում՝ հորական կողմից ասորական ծագում ունեցող ընտանիքում: Նրա պապը հայտնի հանբալիական մազհաբի կրոնագետ ու *muḥaddiṯ* էր Բաալբաքում: Հայրը, ով նույնպես հանբալիականության հետեւորդ էր, վճռում է տեղափոխվել Կահիրե, որտեղ եւ ծնվում եւ իր կյանքի մեծ մասն է անցկացնում ապագա պատմիչը: Վաղ տարիքում ալ-Մակրիզիի վրա մեծ ազդեցություն է ունեցել մորական պապը՝ կահիրեցի հայտնի կրոնահրավագետ *(fāqih)* իբն Սաիղ ալ-Հանաֆին (մահ. 1375թ.): Վերջինիս առաջնորդությամբ ալ-Մակրիզին ստացել է հանաֆիական նախնական կրթություն: Հոր մահից հետո, սակայն, հարել է շաֆիականությանը՝ աշակերտելով ավելի քան 600 շեյխերի՝ Կահիրեում, Դամասկոսում եւ Մեքքայում[6]: Ալ-Մակրիզի գիտնականի եւ պատմիչի ձեւավորման վրա նշանակալի ազդեցություն է ունեցել նաեւ հռչակավոր իբն Խալդունը (մահ. 1406թ.)[7]:

Մինչ պատմագրությանը նվիրվելը ալ-Մակրիզին վարել է ակտիվ հասարակական-քաղաքական գործունեություն: Ընկերական հարաբերություններ ունենալով մամլուքյան բարձր դասի ներկայացուցիչների հետ եւ վայելելով

---

*p. 192-239:* Այյուբյանների պատմության նաեւ անգլերեն թարգմանություն կա: Տե՛ս **Broadhust R. J. C.,** *A history of the Ayyūbid sultans of Egypt, Twayne, Boston, 1980.*

5 Մատենագրի կյանքի ու գործունեության մասին մանրամասն տե՛ս մասնավորապես ***Muḥammad Kamāl al-Dīn ʿIzz al-Dīn ʿAlī,*** *Arbaʿat Muʾarriḫīn wa arbaʿat muʾallafāt min dawlat al-Mamālīk al-Ǧarākisa, al-Hayʾa al-Miṣriyya al-ʿĀmma li al-Kitāb, al-Qāhira, 1992, ṣ. 157-176,* ինչպես նաեւ նույնի՝ *al-Maqrīzī muʿarriḫan, ʿĀlam al-kutub, Bayrūt, 1990, ṣ. 23-47;* ***Muḥammad Muṣṭafā Ziyāda,*** *al-Muʾarriḫūn fī Miṣr fī al-qarn al-ḫāmisa ašara al-mīlādī (al-qarn al-tāsiʿ al-hiǧrī), al-Qāhira, 1949, ṣ. 6-10,* ինչպես նաեւ նույնի՝ *Tārīḫ hayāt al-Maqrīzī // Dirāsāt ʿan al-Maqrīzī (maǧmūʿat abḥāṯ), al-Hayʾa al-Miṣriyya al-ʿāmma li al-taʾlīf wa al-našr;* **Rabbat N.,** *Who was al-Maqrīzī? A Biographical Sketch // MSR, vol. 7.2, 2003, pp. 1-19* եւ պարբերականի այս հատորն ընդհանրապես, որն ամբողջովին նվիրված է ալ-Մակրիզիին: Տե՛ս նաեւ **Bauden,** *al-Maqrīzī pp. 1074-1076,* ինչպես նաեւ նույնի՝ *al-Maqrīzī // Christian Muslim Relations: A bibliographical history, vol. 5 (1350-1500), E. J. Brill, Leiden-Boston, 2013, pp. 380-383* եւ բոլորովին վերջերս տպագրված *Taqī al-Dīn Aḥmad ibn ʿAlī al-Maqrīzī // Medieval Muslim Historians and the Franks in the Levant, ed. by Alex Mallett, E. J. Brill, Leiden-Boston, 2014, pp. 161-167.*

6 ***Al-Saḫāwī,*** *al-Ḍawʾ al-lāmiʿ, ǧ. 2, Bayrūt, Dār al-ǧīl, 1992, ṣ. 23; Muḥammad Kamāl al-Dīn ʿAlī, al-Maqrīzī muʾarriḫan, ṣ. 34-42;* **Rabbat,** *Who was al-Maqrīzī?, pp. 10-11.*

7 **Rosenthal F.,** *al-Maḳrīzī // Encyclopaedia of Islam, 2nd edition* (հետայսուն՝ *EI2), vol. 3 (H-IRAM), E. J. Brill, Leiden, 1986, pp. 193-194;* **Šākir Muṣṭafā,** *al-Tārīḫ al-ʿArabī wa al-muʾarriḫūn: Dirāsa fī taṭawwur ʿilm al-tārīḫ wa maʿrifat riǧālihi fī al-Islām, ǧ. 3, Dār al-ʿIlm li al-malāyīn, Bayrūt, 1990, ṣ. 140:* Հմմտ. **Irwin R.,** *al-Maqrīzī and ibn Khaldun, historians of the unseen // MSR, vol. 7.2, pp. 217-230* եւ **Broadbridge A.,** *Royal authority, justice, and order in society: The influence of ibn Khaldūn on the writings of al-Maqrīzī and Ibn Taghrībirdī // MSR, vol. 7.2, pp. 231-245;* **Rabbat N.,** *Was al-Maqrīzī's Khiṭaṭ a Khaldūnian history? // Der Islam, vol. 89.2, 2012, pp. 120-123.*

նրանց հովանավորությունը՝ նա բազմաթիվ հարգի պետական պաշտոններ է զբաղեցրել սուլթան ալ-Մալիք ալ-Զահիր Բարկուկի (կառ. 1382-1389թթ., 1390-1399թթ.) եւ նրա որդու՝ ալ-Նասիր Ֆարաջի (1399–1405թթ., 1405–1412թթ.) կառավարման տարիներին: Մանկավարժական եւ հոգեւոր-կրոնական գործունեությունից զատ (հաղիս է դասավանդել Կահիրեի *madrasa*-ներում, եղել է իմամ եւ խատիբ քաղաքի տարբեր մզկիթներում)՝ ալ-Մակրիզին գրագիր է եղել դիվանատանը *(diwān al-inšāʾ)*, իսկ 1399թ. եւ 1400թ. մի կարճ ժամանակ զբաղեցրել է Կահիրեի *muḥtasib*-ի *(«չափուկշռի վերատեսուչ», «շուկաների վերակացու»)* բարձր պաշտոնը, որը երկու անգամ էլ զիջել է իր կրտսեր ժամանակակից՝ մամլուքյան պատմագրության մյուս անվանի հեղինակությանը՝ ալ-Այնիին (մահ 1453թ.): Այս վերջինի հետ հարաբերությունները շուտով այնքան լարվեցին, որ վերաճեցին ակադեմիական մրցակցության[8]: 1407/1408թ. ալ-Մակրիզին սուլթան Ֆարաջին ուղեկցեց Դամասկոս, որտեղ վերջինս նրան մի շարք կարեւոր պաշտոնների նշանակեց: Սուլթանը նրան առաջարկեց նաեւ Դամասկոսի *qāḍī al-quḍāt («դատավորների դատավոր»)* պաշտոնը, որը ալ-Մակրիզին մերժեց:

Դամասկոսյան ճամփորդությունը կտրուկ շրջադարձ եղավ ալ-Մակրիզիի հետագա գործունեության համար: 1412թ. Դամասկոսում սպանվեց սուլթան Ֆարաջը: Կահիրե վերադառնալով՝ ալ-Մակրիզին վճռեց թողնել հասարակական-քաղաքական գործունեությունը՝ կյանքի մնացած մասը նվիրելով մատենագրությանը: Նրա այս որոշման իրական պատճառները հայտնի չեն: Մուստաֆա Զիյադայի կարծիքով՝ ալ-Մակրիզիի այդ որոշման հիմքում հավանաբար ընկած է եղել վարչակառավարչական եւ ստեղծագործական-մանկավարժական գործունեության անհամատեղելիությունը, քանզի առաջինը շատ ժամանակ էր խլում՝ զրկելով երկրորդով զբաղվելու հնարավորությունից[9]: Բայց ավելի տրամաբանական է թվում Բրոադբրիդջի ենթադրությունը: Ըստ նրա՝ ալ-Մակրիզիի մեկուսանալու պատճառը եղել է այն, որ Ֆարաջի մահից հետո՝ հաջորդած գահակալներ ալ-Մուայյադ Շեյխի եւ ալ-Աշրաֆ Բարսբայի օրոք, նա անկարող է եղել պահպանել իր դիրքն ու հեղինակությունը մամլուքյան արքունական շրջանակներում՝ մեկընդմիշտ զրկվելով մեծատոհմիկ ազնվականների մեկենասությունից[10]: Այդ ժամանակներից ի վեր նա դառնում է Բուրջի մամլուքյան վերնախավի ներկայացուցիչների սուր քննադատներից մեկը՝ նրանց մեղադրելով հասարակական հետընթացի, երկրի վիճակի անկայունության, բարքերի անկման եւ եգիպտական հասարակության մեջ արմատացած այլ հոռի երեւույթների համար: Մամլուքյան կառավարող շրջանակների նկատմամբ նրա տածած անհանդուրժողական

8 ***Muḥammad Kamāl al-Dīn ʿAlī,*** *al-Maqrīzī muʾarriḫan, ṣ. 42-44;* **Broadbridge A.,** *Academic Rivalry and the Patronage System in Fifteenth-Century Egypt: al-ʿAynī, al-Maqrīzī, and Ibn Hajar al-ʿAsqalanī // MSR, vol. 3, 1999, pp. 85-107.*

9 ***Muṣṭafā Ziyāda,*** *Tārīḫ ḥayāt al-Maqrīzī, ṣ. 16.*

10 **Broadbridge,** *Academic rivalry, p. 92:* Հմմտ. **Rabbat,** *Who was al-Maqrīzī?, p. 16.*

վերաբերմունքի լավագույն ապացույցը իր ժամանակակից մամլուքներին նրա տված բնորոշումն է՝ *«առավել վավաշոտ, քան կապիկները, ավելի անկշտում, քան առնետները, ավելի վնասակար, քան գայլերը»*[11]:

Կյանքի վերջին տարիներին մտերիմ ընկերների եւ աշակերտների հետ մի քանի անգամ այցելել է Մեքքա՝ այդ թվում հաջջի դառնալու նպատակով, որտեղ նույնպես մի կարճ ժամանակ *ḥadīṯ* է դասավանդել: Ալ-Մակրիզին վախճանվել է 1442թ. Կահիրեում երկարատեւ հիվանդությունից հետո եւ թաղման չափազանց համեստ արարողությամբ հողին հանձնվել այն նույն գերեզմանատանը, որտեղ նաեւ իբն Խալդունն է թաղված[12]:

Ալ-Մակրիզին հեղինակ է բազմաթիվ եւ տարբեր ժանրերի երկերի՝ ինչպես կարճառոտ մենագրությունների, այնպես էլ ստվարահատոր ժամանակագրությունների եւ կենսագրական բառարանների, թեեւ նրա թողած հարուստ մատենագրական ժառանգությունից ամեն ինչ չէ, որ պահպանվել է:

Օրինակ, կորսված է նրա *ʿIdq ǧawāhir al-asfāt fī mulūk Miṣr wa al-Fusṭāṭ* երկը, որ Եգիպտոսի պատմությունն է իսլամական նվաճումից մինչեւ Ֆաթիմյան դինաստիայի հիմնադրումը: Մինչդեռ պահպանված է նրա հեղինակած Ֆաթիմյան պատմությունը, որը կրում է *Ittiʿāẓ al-ḥunafāʾ bi aḫbār al-aʾimma al-Fātimiyyīn al-ḫulafāʾ* վերնագիրը: Հատկանշական է, որ սա Եգիպտոսի պատմության առանձնապես այս շրջանին նվիրված միակ ժամանակագրությունն է միջնադարյան մուսուլմանական պատմագրության մեջ[13]: Ֆաթիմյանների նկատմամբ ալ-Մակրիզիի հետաքրքրության շարժառիթներից մեկը եղել է նրա ծագումը. իր իսկ պնդմամբ՝ նա ֆաթիմյան խալիֆաների ժառանգ էր[14]: Երկում շատ արժեքավոր տեղեկություններ կան ֆաթիմյան ժամանակների անցքերի մասին[15]: Ժամանակագրության արժեքը էլ ավելի մեծ կլիներ, եթե հեղինակը հետեւողականորեն հիշատակեր բոլոր այն աղբյուրները, որոնցից օգտվել է իր երկը շարադրելիս[16]:

Ալ-Մակրիզիի պատմագրական ժառանգության թագը նրա՝ Այուբյանների եւ Մամլուքների պատմությանը նվիրված երկն է՝ *Kitāb al-sulūk lī maʿrifat duwal al-mulūk*-ը, որի մասին արդեն ակնարկել ենք վերեւում: Այն, ըստ այդմ, ընդգրկում է Ֆաթիմյանների կործանմանը հաջորդած մոտ երեքդարյա ժամանակաշրջանի՝ 1171-1441թթ. պատմությունը[17]: *Kitāb al-sulūk*-ը մեծ ճանա-

11 Տե՛ս **al-Maqrīzī,** *al-Mawāʿiẓ wa al-iʿtibār bi ẕikr al-ḫiṭaṭ wa al-aṯār, ǧ. 2, Bulāq, al-Qāhira, 1854, ṣ. 214:* Նույնի մասին տե՛ս նաեւ **Rabbat N.,** *Representing the Mamluks in Mamluk Historical Writing // The Historiography of Islamic Egypt, c. 950-1800, ed. by H. Kennedy, E. J. Brill, Leiden, 2000, p. 68, n. 23.*

12 Տե՛ս նույնի՝ *Who was al-Maqrīzī?, p. 18-19* եւ **Bauden,** *Taqī al-Dīn, p. 167.*

13 **Walker P.,** *Al-Maqrīzī and the Fatimids // MSR, vol. 7.2, p. 3.*

14 **Rabbat,** *Who was al-Maqrīzī?, pp. 6-10.*

15 **Lev Y.,** *Saladin in Egypt, E. J. Brill, Leiden, 1999, pp. 43-44.*

16 **Bauden,** *al-Maqrīzī, p. 1074.*

17 Ալ-Մակրիզիի այս երկը արժեքավոր սկզբնաղբյուր է նաեւ Կիլիկիայի հայոց պատմության համար, եւ մենք մեր հետագա ուսումնասիրություններում փորձելու ենք բացահայտել հայոց պատմության համար նրա ներկայացրած կարեւորության ասպեկտները:

չում է ունեցել անգամ հեղինակի կենդանության օրոք՝ նույնիսկ Եգիպտոսի սահմաններից անդին: Հայտնի է, որ 1428թ. Լենկ Թեմուրի որդու՝ Շահրուհի կողմից Կահիրե ուղարկված դեսպանները խնդրել են իրենց տրամադրել ալ-Մակրիզիի երկի մի օրինակ[18]: Երկար ժամանակ այս երկը բացառիկ եւ անփոխարինելի աղբյուր է համարվել մամլուքյան պատմության ուսումնասիրության համար: Վերջին ժամանակներում, սակայն, այդ շրջանի պատմության նորանոր աղբյուրների հրատարակությունը երեւան է հանել ալ-Մակրիզիի պատմագրական «մեթոդի» կարեւորագույն թերությունը՝ իր օգտագործած աղբյուրները չհիշատակելու նրա սովորությունը: Օրինակ, ինչպես Լիթթլը, Ամիտայը եւ վերջերս էլ Մասուդն են ցույց տվել, Բահրի մամլուքների եւ Բուրջի մամլուքների վաղ շրջանի պատմությունը շարադրելիս նրա համար առանցքային աղբյուր ու ուղեցույց է ծառայել իբն ալ-Ֆուրաթի *Tārīḫ al-duwal wa al-mulūk*-ը[19]: Բայց նա խուսափել է իր իրական աղբյուրը բացահայտելուց: Ըստ Բոդենի՝ նրա օգտագործած «տեխնիկայի» բնութագրիչ հատկանիշը *«տարբեր աղբյուրներից քաղված հաղորդումները միմյանց հետ զուգորդելն ու սեփական բառերով վերաշարադրելն է»*[20]: Վկայությունները ամփոփելու, համառոտելու եւ, ինչպես Լիթթլն է մի առիթով ձեւակերպում, «իր իսկ լեզվով վերարտադրելու»[21] նրա այս սովորությունը երբեմն անճշտությունների եւ հաղորդումների իրական բովանդակության աղավաղման պատճառ է դարձել[22]: Նույն ուսումնասիրողը մեկ այլ տեղում եզրահանգում է, որ քանի դեռ *Kitāb al-sulūk*-ը համեմատվում է ժամանակակից այլ պատմիչների տարեգրությունների հետ, ալ-Մակրիզին կշարունակի «սոսկ բանաքաղ եւ մյուսների գործերը պահպանած հեղինակ» համարվել[23]: Համենայն դեպս, անկախ ժամանակակից հետազոտողների քննադատական հայացքներից՝ նույնիսկ այս շրջանի անցքերի առնչությամբ ալ-Մակրիզիի պատմության մեջ

18 **Broadbridge,** *Academic rivalry, p. 103;* **Bauden,** *al-Maqrīzī (Christian-Muslim Relations), p. 383.*

19 Տե՛ս **Little D.,** *An introduction to Mamlūk historiography: an analysis of Arabic annalistic and biographical sources for the reign of al-Malik an-Nāṣir Muḥammad ibn Qalā'ūn (Freiburger Islamstudien, Bd. II.), Franz Steiner Verlag, Wiesbaden, 1970, pp. 77-78;* **Amitai-Preiss R.,** *al-Maqrīzī as a Historian of the Early Mamluk Sultanate (or: Is al-Maqrīzī an Unrecognized Historiographical Villain?) // MSR, vol. 7.2, pp. 99-118;* **Massoud S. G.,** *The chronicles and annalistic sources of the early Mamluk Circassian Period, E. J. Brill, Leiden-Boston, 2007, pp. 49-53.*

20 **Bauden,** *al-Maqrīzī, p. 1074.*

21 **Little D.,** *Analysis of the Relationship between Four Mamluk Chronicles for 737-45 // Journal of Semitic Studies, vol. 19, 1974, p. 260.*

22 **Amitai-Preiss R.,** *Mongols and Mamluks: The Mamlik-Īlkhānid War, 1260-1281, Cambridge University Press, Cambrdge, 1995, p. 5 (Introduction):* Կոնկրետ օրինակների համար տե՛ս **Ayalon D.,** *The Great Yāsa of Chingiz Khān: A Reexamination (Part C2). Al-Maqrīzī's Passage on the Yāsa under the Mamluks // Studia Islamica, No. 38 (1973), pp. 121-123;* **Amitai-Preiss,** *Mongols and Mamluks, p. 30, note 32:* Նույն միտքն է արտահայտել նաեւ Իրվինը: Տե՛ս **Irwin R.,** *Mamluk history and historians // The Cambridge history of Arabic literature: Arabic literature in the post-classical period, ed. by R. Allen and D. S. Richards, Cambridge University Press, 2006, p. 167.*

23 Տե՛ս **Little,** *Historiography, p. 437,* ինչպես նաեւ նույնի՝ *A Comparison, p. 207.*

քիչ չեն *«այնպիսի հաղորդումները, որ չեն հանդիպում ոչ մի այլ աղբյուրում, եւ որոնց ծագումը շարունակում է առեղծված մնալ»*[24]:

Իր ապրած ժամանակի պատմությունը շարադրելիս ալ-Մակրիզին հանդես է գալիս գերազանցապես որպես ինքնուրույն ու անկախ պատմիչ՝ հիմնվելով իր իսկ ժողոված տեղեկությունների եւ պատմագրական նյութի վրա[25]: Ահավասիկ, ալ-Մակրիզին առաջին հերթին եգիպտագիր պատմիչ է եւ իր վերոհիշյալ *«եռագրությամբ»* (*ʿIdq ǧawāhir al-asfāt, Ittiʿāẓ al-hunafāʾ, Kitāb al-sulūk*) փորձել է գրի առնել մուսուլմանական Եգիպտոսի ամբողջական պատմությունը՝ սկսած իսլամական նվաճումից ընդհուպ մինչեւ իր ապրած ժամանակները:

Հեղինակի մյուս գլուխգործոցը *al-Mawāʿiẓ wa al-iʿtibār bi ẕikr al-ḫiṭaṭ wa al-aṯār* աշխատությունն է[26], որը նվիրված է ընդհանրապես Եգիպտոսի եւ մասնավորապես Կահիրեի պատմատեղագրական նկարագրությանը: Երկում վառ ներկայացված են տասնհինգերորդ դարի Կահիրեի ճարտարապետական դիմագիծը (թաղամասերի, հուշարձանների, ապարանքների, շուկաների, բաղնիքների, ջրանցքների, մզկիթների, եկեղեցիների, սինագոգների, հիվանդանոցների, դպրոցների եւ այլ շինությունների ու հաստատությունների նկարագրությամբ) եւ հասարակական կյանքի խճանկարը՝ իր քաղաքական եւ քաղաքացիական, սոցիալական եւ տնտեսական, կրոնական եւ մշակութային բնութագրական գծերով[27]: Երկին անգնահատելի արժեք է տալիս նաեւ այն պարագան, որ այն հիմնված է բազմաթիվ աղբյուրների վրա, որոնցից շատերը մեզ չեն հասել:

*Kitāb al-sulūk*-ի պես *al-Ḫiṭaṭ*-ը նույնպես բուռն քննարկումների առարկա է արդի հետազոտողների շրջանում: Բայց եթե առաջինի դեպքում քննադատների տված գնահատականները չեն անցնում հեղինակի «մասնագիտական անազնվության կամ անբարեխղճության» սահմանը, ապա այս երկրորդի դեպքում ալ-Մակրիզիին հասցեագրված մեղադրանքները շատ ավելի լուրջ են, քանի որ խոսքն այստեղ գրագողության մասին է: Այդ մասին վկայող հիմնական աղբյուրը ալ-Մակրիզիի կրտսեր ժամանակակից, մեզ արդեն քաջա-

24 **Northrup L. S.**, *From slave to sultan: The career of al-Manṣūr Qalāwūn and the consolidation of Mamluk rule in Egypt and Syria (678-689 A. H./1279-1290 A. D.), Franz Steiner Verlag, Stuttgart, 1998, p. 52.*

25 **Bauden,** *al-Maqrīzī, p. 1074: Kitāb al-sulūk*-ի եւ ժամանակակից մյուս պատմագիրների երկերի համեմատական քննության մի քանի փորձեր գիտական գրականության մեջ արդեն իսկ ձեռնարկվել են: Տե՛ս **Perho I.**, *al-Maqrīzī and ibn Taghrī Birdī as historians of contemporary events // The Historiography of Islamic Egypt (c. 950-1800), pp. 107-120; Little, A Comparison, pp. 205-215.*

26 Տե՛ս ***al-Maqrīzī,*** *al-Mawāʿiẓ wa al-iʿtibār bi ẕikr al-ḫiṭaṭ wa al-aṯār, 2 ǧ., Bulāq, al-Qāhira, 1853-1854,* ինչպես նաեւ Այման Ֆուադ Սայյիդի նոր հրատարակությունը տե՛ս նույնի՝ *bitaḥqīq Ayman Fuʾād Sayyid, 5 ǧ, Muʾassasat al-Furqān li al-turāṯ al-ʿarabī (Al-Furqān Islamic Heritage Foundation, London, 2002-2004).*

27 Տե՛ս *Musawwadat Kitāb al-Mawāʿiẓ wa al-iʿtibār bi ẕikr al-ḫiṭaṭ wa al-aṯār, bitaḥqīq Ayman Fuʾād Sayyid, Landan, Muʾassat al-Furqān li-al-Turāṯ al-Islāmiy, 1995, ṣ. 2 (Muqaddama);* **Rabbat N.**, *al-Makrizi and his pioneering book al-Khitat // The Journal Hadeeth ad-Dar of Dar al-Athar al-Islamiyyah (Ḥadīṯ al-Dār. Dār al-Aṯār al-Islāmiyya), vol. 23, 2007, p. 51.*

ծանոթ ալ-Սախավին է, ում հավաստմամբ՝ ինքն այդ մասին լսել է իր ուսուցչից՝ իբն Հաջար ալ-Ասկալանիից (մահ. 1449թ.): Ալ-Սախավին իր երկերում քանիցս ալ-Մակրիզիին մեղադրում է կահիրեցի գիտնական ալ-Աուհադիի (մահ. 1408թ.) մահից հետո վերջինիս անավարտ աշխատության սեւագիրը գողանալու, որոշակի մանր լրացումներ կատարելու եւ իր գրչին վերագրելու մեջ[28]: Հատկանշական է, որ իր կենսագրական բառարաններից մեկում՝ *Durar al-ʿuqūd*-ում ալ-Մակրիզին կենսագրական հոդված ունի նվիրված ալ-Աուհադիին, որում նա բացեիբաց գրում է, որ ինքն իսկապես օգտվել է ալ-Աուհադիի՝ Կահիրեի տեղագրությանը նվիրված երկի սեւագրերից: Այս հանգամանքը կարծես թե զգալիորեն նվազեցնում է ալ-Սախավիի մեղադրանքի կշիռը՝ թույլ տալով արդարացնել մատենագրին[29]: Սփոփիչ է նաեւ այն հանգամանքը, որ *al-Ḫiṭaṭ*-ում կան նկարագրություններ բազմաթիվ իրադարձությունների եւ շինությունների, որոնք տեղի են ունեցել կամ կառուցվել են ալ-Աուհադիի մահից հետո: Հետեւապես, այս երկը պարզ «արտագրություն» համարվել չի կարող, եւ եթե նույնիսկ ալ-Մակրիզին իր ընկերոջ երկը դրել է իր իսկ աշխատության հիմքում, այնուամենայնիվ, *al-Ḫiṭaṭ*-ի մի զգալի մասը բացառապես նրա գրչին է պատկանում[30]:

Այս երկի «հեղինակային իրավունքների» հարցին վերջերս վերստին անդրադարձել է Ֆ. Բոդենը: Նա *al-Ḫiṭaṭ*-ի՝ ալ-Մակրիզիի ինքնագիր մի ձեռագրում գտել է այլ գրչի ձեռքին պատկանող էջեր, որոնք ըստ նրա՝ ալ-Աուհադիի աշխատության սեւագրերից պահպանված մի հատված են: Համեմատելով երկի այս եւ մյուս պահպանված խմբագրությունները՝ նա ի վերջո եզրակացրել է, որ գրագողության մասին ալ-Սախավիի պնդումն իսկապես ճշմարտության բաժին ունի[31]:

Ալ-Մակրիզին հեղինակ է նաեւ երկու կենսագրական բառարանների: Դրանցից առաջինը՝ *al-Tārīḫ al-muqaffā al-kabīr* վերնագրով, պարունակում է Եգիպտոսի մուսուլմանական նվաճումից ի վեր մինչեւ իր ծնունդն ապրած «երեւելիների» կենսագրություններ: Հայտնի է, որ ինքը՝ ալ-Մակրիզին, մտադիր է եղել բառարանի հատորների թիվը հասցնել 80-ի, բայց ցավոք մինչեւ իր մահը գործն ավարտին հասցնել չի կարողացել: Երկի պահպանված մասերը հրատարակել է Մուհամմադ ալ-Յալավին[32]: Մատենագրի հեղինակած մյուս կենսագրական բառարանը *Durar al-ʿuqūd al-farīda fī tarāǧim al-aʿyān al-mufīda*-ն

28 ***Saʿīḍ ʿĀshūr,*** *ʿAdwā' ǧadīda ʿalā al-mu'arriḫ Aḥmad ibn ʿAlī al-Maqrīzī wa-kitābātihi' // ʿĀlam al-Fikr, ǧ. 14, 1983, ṣ. 169-170.*

29 Անդ, ṣ. 170-175; **Крачковский И. Ю.,** Избранные сочинения, т. 4 (Арабская географическая литература), Издательство Академии Наук СССР, Москва-Ленинград, 1957, с. 477.

30 Տե՛ս նույն տեղում, ինչպես նաեւ *Musawwadat Kitāb al-Mawāʿiz, ṣ. 80* (Muqaddama).*

31 **Bauden F.,** *Maqriziana IX: Should al-Maqrīzī be thrown out with the bath water? The question of his plagiarism of al-Awḥadī's Khiṭaṭ and the documentary evidence // MSR, vol. XIV, 2010, pp. 159-232:* Հմմտ. **Rabbat,** *Was al-Maqrīzī's Khiṭaṭ a Khaldūnian history?, p. 132, n. 56.*

32 ***Al-Maqrīzī,*** *Kitāb al-Muqaffā al-Kabīr, bitaḥqīq Muḥammad al-Yaʿlāwī, 8 ǧ., Dār al-Ġarb al-Islāmī, Bayrūt, 1991.*

է[33]: Նրանում հեղինակը ներառել է իր կյանքի օրոք մահացած հայտնի ժամանակակիցների ավելի քան 500 կենսագրական հոդվածներ[34]:

Ալ-Մակրիզիի՝ մեզ հասած երկերից քիչ հայտնի է, բայց բացառիկ կարեւորություն ունի նրա *al-Ḫabar ʿan al-bašar fī ansāb al-ʿArab wa nisb sayyid al-bašar* վերնագրով համընդհանուր պատմությունը՝ սկսած աշխարհի եւ մարդու արարումից[35]: Երկը, ինչպես հեղինակն է պարզաբանում, գրվել է որպես առաջաբան *(madḫal)* մեկ այլ աշխատության համար՝ *Imtāʿ al-asmāʿ* վերնագրով[36], որը նվիրված է Մուհամմադ մարգարեի վարքի *(sīra)* տարբեր ասպեկտների քննությանը: Երկի նպատակը, ինչպես հեղինակն է պարզաբանում, արաբներին աշխարհի մյուս ժողովուրդներից առանձնացնելն է *(ǧinsuhā min sāʾir al-aǧnās)*, նրա արժանիքները ցուցանելը[37]: *Al-Ḫabar ʿan al-bašar*-ի առաջին հատորներն, ըստ այդմ, նվիրված են արաբների նախաիսլամական պատմությանը՝ ծագումնաբանությանը, ավանդույթներին, հավատալիքներին: Այնուհետեւ նա անցում է կատարում այլ ժողովուրդների՝ պարսիկների, հրեաների, հույների, լատինների եւ գոթերի *(al-qūṭ)* համառոտ պատմությանը[38]: *«Մարդկության պատմության»* վերջին մասը հակաքրիստոնեական բանավիճական գրականության իսկական նմուշ է: Նրանում խոսվում է մարգարեների մասին ընդհանրապես եւ Ղուրանում ու Աստվածաշնչում հանդիպող մարգարեների մասին մասնավորապես, Քրիստոսի եւ քրիստոնեության ծագման, նրա տարածման, հիմնական դոգմաների մասին՝ համեմելով սուր քննադատությամբ եւ համեմատական աղերսեր տանելով իսլամի հետ՝ որպես միակ ճշմարիտ հավատի: Ինչպես իր մյուս վերոնկարագրյալ երկերում, *al-Ḫabar ʿan al-bašar*-ում նույնպես ալ-Մակրիզին շատ հաճախ զլանում է իր աղբյուրները նշել[39]:

Երկար ժամանակ երկը անտիպ էր՝ զրկված գիտական լայն շրջանակների ուշադրությունից: Այն միայն վերջերս է տպագրվել՝ արդի հետազոտողներին հնարավորություն տալով բացահայտելու ցայժմ հիմնականում որպես եգիպտագիր պատմիչ հայտնի ալ-Մակրիզիի մատենագրական ժառանգության տակավին անհայտ էջերը[40]:

---

33 Տե՛ս ***al-Maqrīzī,*** *Durar al-ʿuqūd al-farīda fī tarāǧim al-aʿyān al-mufīda, ǧ. 1-2, bitaḥqīq Adnān Darwīš wa Muḥammad al-Miṣrī, Dimašq, 1995* եւ մեկ այլ հրատարակություն եւս՝ նույնի՝ *ǧ. 1-4, bitaḥqīq Maḥmūd al-Ǧalīlī, Dār al-Ġarb al-Islāmī, Bayrūt, 2002.*

34 Տե՛ս ***Muḥammad Kamāl al-Dīn ʿIzz al-Dīn,*** *al-Maqrīzī muʾarriḫan, ṣ. 93.*

35 Տե՛ս ***al-Maqrīzī,*** *al-Ḫabar ʿan al-bašar fī ansāb al-ʿArab wa nisb sayyid al-bašar, bitaḥqīq Ḫālid, Aḥmad al-Suwaydī wa ʿĀrif ʿAbd al-Ġanī, 8 ǧ., Dār al-ʿarabiyya li al-mawsūʿāt, Bayrūt, 2013,* ինչպես նաեւ **Bauden,** *al-Maqrīzī (Christian-Muslim Relations), p. 392* եւ նույնի՝ *Taqī al-Dīn, p. 196-199.*

36 Տե՛ս ***al-Maqrīzī,*** *Imtāʿ al-asmāʿ bi mā li al-nabī min aḥwāl wa al-amwāl wa al-ḥafada wa al-matāʿ, 15 ǧ., bitaḥqīq Muḥammad ʿAbd al-Ḥamīd al-Namīsī, Dār al-Kutub al-ʿIlmiyya, Bayrūt, 1999.*

37 Տե՛ս ***al-Maqrīzī,*** *al-Ḫabar, ǧ. 1, ṣ. 53,* ինչպես նաեւ ***Muḥammad Kamāl al-Dīn ʿIzz al-Dīn,*** *al-Maqrīzī muʾarriḫan, ṣ. 62-63.*

38 **Bauden,** *al-Maqrīzī (Christian-Muslim relations), pp. 392-393.*

39 Անդ, *pp. 393-394.*

40 Ալ-Մակրիզիի այս երկի վերոհիշյալ հրատարակությունը սիրալիր կերպով մեզ է տրամադրել Ֆ. Բոդենը, ինչի համար մեր խորը երախտագիտությունն ենք հայտնում նրան:

Բացի այս հիմնարար աշխատություններից՝ ալ-Մակրիզին հեղինակ է բազմաթիվ կարճառոտ ակնարկների *(rasā'il)*՝ ամենատարբեր թեմաներով, որոնց մի մասն առհասարակ կապ չունի պատմագրության հետ, բայց ուրվագծում է մատենագրի գիտական մյուս հետաքրքրությունների եւ հանրագիտարանային գիտելիքների շրջանակը (օրինակ մեղուների վերաբերյալ[41], հանքանյութերի եւ մետաղների մասին[42], իսլամական դրամների մասին[43], հաջջ կատարած խալիֆաների եւ տիրակալների մասին[44], Աստծո «միակության» գաղափարի շուրջ[45], Օմայան եւ Հաշիմյան ցեղերի հակամարտ հարաբերությունների եւ մրցակցության վերաբերյալ[46], Եգիպտոսում հաստատված արաբական ցեղերի մասին[47], Եթովպիայի մուսուլման տիրակալների մասին[48] եւ այլն): Ալ-Մակրիզիի մանր երկերից առանձին անդրադարձի է արժանի *Iġāsat al-umma bi kašf al-ġumma* ակնարկը[49]: Նրանում հեղինակը քննության է առել 14-դարի վերջին եւ 15-րդ դարի սկզբներին Եգիպտոսին պատուհասած սոցիալ-տնտեսական ճգնաժամի աղբյուրները՝ ինչպես բնական երեւույթները, օրինակ՝ երաշտը, հետո նաեւ մամլուքյան սուլթանների սխալ ներքին քաղաքականությունը՝ մասնավորապես դրամական անհեռատես «բարեփոխումները», աշխարհիկ եւ հոգեւոր իշխանության բոլոր օղակներ թափանցած կաշառակերությունը, ժողովրդի վրա դրված ծանր հարկային բեռը, որ երկրում սղաճի, գների բարձրացման, սովի եւ համաճարակների պատճառ էին դարձել, որոնցից մեկի զոհն էլ իր դուստրն էր եղել[50]:

Ալ-Մակրիզիի մատենագրական ժառանգությանը նվիրված այս ակնարկը հարկ ենք համարում եզրափակել մի փոքրիկ դիտարկմամբ: Որքան էլ

41 *Naḥl ʿibar al-naḥl // Rasā''il al-Maqrīzī, bitaḥqīq Ramaḍān al-Badrī wa Aḥmad Muṣṭafā Qāsim, al-Qāhira, 1998, ṣ. 277-342.*

42 *Al-Maqāsiḍ al-saniyya fī maʿrifat al-ağsām al-maʿdaniyya // Rasā'il al-Maqrīzī, ṣ. 213-227.*

43 *Al-Nuqūd al-Islāmiyya al-qadīma (Šuẓūr al-ʿuqūd fī ẓikr al-nuqūd) // Rasā'il al-Maqrīzī, ṣ. 155-175.*

44 ***Al-Maqrīzī,*** *al-Ẕahab al-masbūk fī ẓikr man hağğa min al-ḫulafā' wa al-mulūk, bitaḥqīq Ğamāl al-Dīn Šayyal, Maktabat al-ṯaqāfa al-dīniyya, 2000.*

45 *Tağrīd al-tawḥīd al-mufīd // Rasā'il al-Maqrīzī, ṣ. 83-122.*

46 ***Al-Maqrīzī,*** *Kitāb al-nizāʿ wa al-taḫāṣum fīmā bayna Umayya wa banī Hāšim, bitaḥqīq Ḥusayn Muʾnis, Dār al-Maʿārif, al-Qāhira, 1988,* ինչպես նաեւ նույնի՝ *Rasā'il al-Maqrīzī, ṣ. 11-82:* Անգլերեն թարգմանությունը տե՛ս **Bosworth C. Ed.,** *al-Maqrīzī's book of contention and strife concerning the relations between the Banū Umayya and the Banū Hāshim // Journal of Semitic Studies, Monograph No. 3, Manchester University Press, 1980.*

47 ***Al-Maqrīzī,*** *al-Bayān wa al-iʿrāb ʿan man fī arḍ Miṣr min qabaʾil al-Aʿrab, murāğaʿat Ibrāhīm Ramzī, al-Qāhira, 1916,* ինչպես նաեւ նույնի՝ *bitahqīq ʿAbd al-Mağīd ʿĀbidīn, ʿĀlam al-Kutub, al-Qāhira, 1961.*

48 *Al-Maqrīzī, al-Ilmām bi aḫbār man bi arḍ al-Ḥabaša min mulūk al-Islām // Rasā'il al-Maqrīzī, ṣ. 229-244:* Տե՛ս նաեւ ***Muḥammad Kamāl al-Dīn ʿIzz al-Dīn,*** *al-Maqrīzī muʾarriḫan, ṣ. 81-90; Bauden, al-Maqrīzī (Christian-Muslim Relations), pp. 390-391.*

49 ***Al-Maqrīzī,*** *Iġāsat al-umma bi kašf al-ġumma, bitaḥqīq Karam Ḥilmī Faraḥāt, ʿAyn li al-Dirāsāt wa al-buḥūṯ al-insāniyya wa al-iğtimaʿiyya, al-Qāhira, 2007,* ինչպես նաեւ **Allouche A.,** *Mamluk Economics: A study and translation of al-Maqrīzī's Ighāthah, University of Utah Press, Salt Lake City, 1994:* Ալ-Մակրիզիի այս եւ մյուս երկերի դրամագիտական նշանակության մասին տե՛ս նաեւ **Schultz W. C.,** *"It has no root among any community that believes in revealed religion, nor legal foundation for its implementation": Placing al-Maqrīzī's Comments on Money in a Wider Context // MSR, vol. VII, 2003, pp. 169-181.*

50 ***Al-Maqrīzī,*** *Iġāsat al-umma, ṣ. 29-30; Allouche, Mamluk Economics, pp. 14-15.*

մեր օրերում հաճախ են հնչում քննադատություններ ալ-Մակրիզիի հասցեին եւ նրա պատմագրական մեթոդի վերաբերյալ, դրանից նրա թողած ժառանգության արժեքը գուցե վերաարժեւորվում, բայց ամենեւին էլ չի նսեմանում: Նա շարունակում է համարվել միջնադարյան արաբա-իսլամական գրավոր մշակույթի ամենահանճարեղ այրերից մեկը, իսկ նրան վերագրվող պատմագրական երկերը՝ դարակազմիկ հանգրվան մամլուքյան պատմագրական ավանդույթի պատմության մեջ, որոնց համակարգային ուսումնասիրության համար դեռ տասնամյակներ եւ հետազոտողների մի քանի սերունդների ջանքեր են անհրաժեշտ:

## РЕЗЮМЕ

Таки ал-Дин Ахмад ибн Али ал-Макризи (ум. 1442) - один из выдающихся представителей арабской историографии эпохи Мамлюков. Он родился в Каире в академической семье сирийского происхождения. Ал-Макризи получил традиционное исламское образование и первоначально специализировался в канонических науках - в хадисоведении *(ʿilm al-hadiṯ)* и юриспруденции (*fiqh*). Таким образом, он начал свою карьеру как преподаватель пророческих традиций и проповедник. Затем он стал секретарем в придворной канцелярии, а некоторое время служил в судебном ведомстве. После, он сумел приобрести покровительство султана Баркука (1382-1389, 1390-1399) и был назначен на очень престижный пост мухтасиба (*"смотритель рынков"* или *"инспектор торговли"*) Каира. Ал-Макризи поддерживал свою близость с правящей элитой также в период правления сына Баркука - Фараджа (1399–1405, 1405–1412). Но после смерти Фараджа, он не смог поддержать свой кредит и славу при дворе. Ему пришлось отказаться от активной общественной карьеры и остаток жизни целиком посвятить плодородной литературной и творческой деятельности, сосредоточиваясь в частности на написании истории Египта.

Полагается, что ал-Макризи имел намерение сочинить всеобщую историю Египта, начиная с мусульманского завоевания до времени своей жизни в трилогии. К сожалению, первая часть этой трилогии *(ʿIdq ǧawāhir al-asfāt fī mulūk Miṣr wa al-Fusṭāṭ),* по истории от мусульманского завоевания вплоть до начала правления Фатимидов, утрачена. Однако, сохранены две другие части, охватывающие историю Фатимидов *(Ittiʿāẓ al-hunafāʾ bi aḫbār al-aʾimma al-Fātimiyyīn al-ḫulafāʾ),* Айюбидов и Мамлюков *(Kitāb al-sulūk lī maʿrifat duwal al-mulūk).*

Современные исследователи часто критикуют историографический метод ал-Макризи, в частности, за небрежность в указании источников, которые он использовал. Другой основной труд автора - топографическая история Каира и Египта *(al-Mawāʿiẓ wa al-iʿtibār bi ẕikr al-ḫiṭaṭ wa al-aṯār).* Некоторые

современники обвиняли его в в плагиате у коллеги, утверждая что он просто присвоил черновик этого сочинения, дополнил некоторыми дополнениями и приписал себе. В добавление к этим трудам, ал-Макризи автор двух крупных биографических словарей *(al-Tārīḫ al-muqaffā al-kabīr and Durar al-ʿuqūd al-farīda fī tarāǧim al-aʿyān al-mufīda)* и *"всеобщей истории" (al-Ḫabar ʿan al-bašar fī ansāb al-ʿArab wa nisb sayyid al-bašar).* Заслуживают внимания также его отдельные короткие монографии по различным темам.

## SUMMARY

*Taqī al-Dīn Aḥmad ibn ʿAlī al-Maqrīzī* (d. 1442) is one of the foremost representatives of Arabic historiography of the Mamluk epoch. Born in Cairo to a scholarly family of Syrian origin, *al-Maqrīzī* was educated as a traditionist *(muhaddiṯ)* and a jurist *(fāqih)*. Thus, he started his career as a teacher of prophetic traditions and a preacher. Step by step, he rose to become a clerk in the court chancery and a deputy *qādī*. After, he managed to gain the patronage of sultan *Barqūq* (r. 1382-1389, 1390-1399) and was promoted to a very prestigious post of the muḥtasib (inspector of markets) of Cairo. *Al-Maqrīzī* maintained his intimacy with the ruling elite under the reign of *Barqūq's son Farağ* (r. 1399–1405, 1405–1412) too. But after the latter's death, he lost his access to the court. He had to retire from his active public career and to devote the rest of his life to prolific literary activities, focusing on writing the history of Egypt in particular.

It is believed that *al-Maqrīzī* had an intention to compose a comprehensive history of Egypt since the Muslim conquest until his own day in a trilogy. Unfortunately, the first part of it *(ʿIdq ğawāhir al-asfāt fī mulūk Miṣr wa al-Fusṭāṭ)* dealing with the history from the Muslim conquest up to the rule of the Fatimids is now lost. However, preserved are the two other parts covering the history of Fatimid *(Ittiʿāẓ al-hunafāʾ bi aḫbār al-aʾimma al-Fātimiyyīn al-ḫulafāʾ)*, Ayyubid and Mamluk dynasties *(Kitāb al-sulūk lī maʿrifat duwal al-mulūk)*. *Al-Maqrīzī* is often criticized for his haphazard historical methodology, especially for inattention to indicating the sources he used. Another magnum opus of *al-Maqrīzī* is a work focusing on the historical topography of Cairo *(al-Mawāʿiẓ wa al-iʿtibār bi ẕikr al-ḫiṭaṭ wa al-aṯār)*. Some contemporaries accused him of having plagiarized this work from a colleague. In addition to these works, he is the author of two large-scale biographical dictionaries *(al-Tārīḫ al-muqaffā al-kabīr and Durar al-ʿuqūd al-farīda fī tarāǧim al-aʿyān al-mufīda)* and a general history of the world *(al-Ḫabar ʿan al-bašar fī ansāb al-ʿArab wa nisb sayyid al-bašar)*. Also remarkable are his short monographs on various topics.